Հավելված N 135
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության Արմավիրի բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ խորհրդատու (ծածկագիր՝ 23-32.5-Մ4-12)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ խորհրդատուն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ խորհրդատուի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր խորհրդատուներից մեկը կամ Բաժնի ավագ խորհրդատուներից մեկը:

4. Աշխատավայրը

Հայաստան, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Ջիվանու 15/50

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Մասնակցել խորհրդատվական ծառայությունների շարունակական զարգացման համար այլ կառույցների հետ կապված աշխատանքներին համագործակցության շրջանակներում,
2. Իրականացնել խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հաջողված փորձի մասսայական տարածման հետ կապված աշխատանքները,
3. Մասնակցել խորհրդատվական ծառայությունների իրականացմանը,
4. Իրականացնել ագրարային ոլորտի մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի մոնիթորիգի իրականացման հետ կապված աշխատանքները,
5. Իրականացնել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքելու և մշակելու նպատակով ուղեցույցների կազմումը,
6. Իրականացնել գյուղատնտեսության բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշների հավաքագրումը և մշակումը,
7. Մասնակցել գյուղատնտեսական ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի հետ կապված աշխատանքներին,
8. Մասնակցել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման

համար համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների ներդրման և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը,

9. Մասնակցել գիտական աշխատանքների և նորարարությունների տեղայնացման աշխատանքներին՝ գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ համագործակցությունը ապահովելու նպատակով:

Իրավունքները՝

- Ներկայացնել առաջարկություններ խորհրդատվական ծառայությունների իրականացման, շարունակական զարգացման, խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հաջողված փորձի մասսայական տարածման վերաբերյալ,
- Կատարել ագրարային ոլորտի մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի մոնիթորիգի հետ կապված աշխատանքները,
- Նախապատրաստել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալներ, նյութեր, գրություններ, զեկուցագրեր և այլն,
- Հավաքագրել և մշակել գյուղատնտեսության բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշները,
- Ներկայացնել գյուղատնտեսական ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի իրականացման հետ կապված առաջարկություններ,

Պարտականությունները՝

- Ուսումնասիրել խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների տարածման իրականացման հետ կապված աշխատանքները,
- Ներկայացնել կարծիք խորհրդատվական ծառայությունների իրականացման, ագրարային ոլորտի մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի մոնիթորիգի վերաբերյալ,
- Հավաքագրել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալները, կազմել ուղեցույցերը,
- Մշակել և հավաքագրել գյուղատնտեսության բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշները,
- Ուսումնասիրել գյուղատնտեսական ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները,
- Նախապատրաստել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունները:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը
Բարձրագույն կրթություն
3.2. Մասնագիտական գիտելիքները
Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ
3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը
Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:
3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ
Ընդհանրական կոմպետենցիաներ՝
- Խնդրի լուծում
- Հաշվետվությունների մշակում
- Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝
- Հասարակության հետ կապերի ապահովում
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
- Ծառայությունների մատուցում
- Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:
4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:
4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:
4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:
4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: